

+10.

1910 № 1842

3337

Յ. ԿՈՍՏԵՆԵՆԻ.

# ՌԻՇՏԸ

ՌԻ

# ՏՆԻ

ԵՅՅ




1910.

Կարգը

ԿԻՐ. Ո. ԵՌԳ. ԶՆՆ. ԿԻՍԵՆ.

891.995
4-75

# ՈՒՂՅԷ



# ՈՒ ԵՃԻ

Ճողովդախան առատիկ

I

Էն շատ-առաջ  
Մեզնից առաջ—  
Մի ուղտ կրլինի,  
Մի էլ կրլինի:  
Արի տես, որ  
Տիրոջ բազուկից  
էշնէր  
Ուղտն էլ  
Հիւանդացել,  
Անպէտքացել,  
Վար են ընկել:  
Ի՞նչ անէին,  
Ի՞նչ անէին ընկածներին.  
Վերցրեցին  
Երկուսին էլ վեր-վարեցին  
Նախրի միջից.

Արձակ դաշտում թող արածեն,  
Մի բան կրլինի.  
Կրլաւանան կամ կրմեռնեն.  
Եւ մնացին ուղտն ու էշը  
Արձակ դաշտում,  
Կանաչ հանդում:  
Շուտով մուցան  
Տիրոջ ծեծը,  
Ծանր աշխատանք,  
Զրկողութիւն.  
Ու եղբոր պէս  
Սիրով էսպէս—  
Հանգ առնելով,  
Կանգ առնելով,  
Իրենց քէֆին  
Կարած էին...


Ու փանք Տիրոջ.  
էշն էր  
Ուղտն էլ  
Մնացին ողջ.  
Հաւ գիրացան,  
Կլորացան,  
էրնէկ տուին,  
էրնէկ տուին էն լաւ օրին,  
Որ նախրից  
Երկուսին էլ  
Վերցրեցին  
Վեր-վարեցին...

—  
Էսպէս անձայն  
Օրերն անցան:

Մէկ օր էշըս՝  
Զուարթադէմ,  
Բօյ-բուսաթով կանգնած  
Ուղտի հէնց դէմ ու գէմ—  
Իռնչը տնկած,  
Հպարտացած,  
Ի՞նչ է ստում.  
Ի՞նչ է ստում.  
«Է՛, ուղտ բիձա,  
Գիտես ինչ կայ,  
Գիտես ինչ կայ,  
Էսօր էսպէս  
Ուրախ եմ ես.  
Քէֆս եկել,  
Սիրաս բացուել:

Զէնովս-մէկ  
Կուզեմ ես-մէկ  
Անուշ ու ձիգ  
Ու գեղեցիկ  
Մի երգ ասեմ:»  
Ու զարմացաւ,  
Ու դայրացաւ  
Մեր ուղտ բիձէն.  
Քրթմնջալէն  
Ասաւ իշուն.  
—Մ՛յ, անուսում,  
Երեխայ ես,  
Թէ խելք չունես.  
Զէնդ լսեն—  
Մեզ կըբշեն.  
Գնա՛ նորից  
Տքա՛ բեռից,  
Քաշիք, քշու՛ր  
Կոո-բեկարից...  
Զօր ու գիշեր  
Ի՞նչ չենք քաշել.  
էլ ի՞նչ ապրանք  
Մեզ չեն բարձել.  
Բրինձ կուզես,  
Բամբակ, ձուար,  
Անձուխ ասես,  
Ալիւր, աղբար.  
Պղինձ, երկաթ,  
Փէտ ու արքաւտ,  
Խոտ, չոր-դարման,  
Քոչ ու քարուան...


20103



Տէ՛յ... Մուշ ու վան  
Միշտ տարել ենք,  
Բեզարել ենք...  
Խելքի արի,  
Չգանք շարի:  
Լսէ՛ դու ինձ,  
Երգն ինչ, բանն ինչ,  
Քո բիճէդ եմ,  
Չէ՛ մեծդ եմ...

Էջը կայնաւ իրեն խօսքին,  
Հաւան չեղաւ ուղտի խելքին.  
«Չէ, ես կ'ասեմ,  
Ես կրճգեմ՝

50572-ահ



36265-66

Անուշ—անուշ,  
Երգս քնքուշ,  
Երգս սիրուն,  
Խաղուն—սահուն  
Ու հէնց հիմի,  
Ու հէնց հիմի,  
Ինչ էլ լինի...  
Է՛շ—անուշ երգ,  
Է՛շ—քնքուշ երգ,  
Տես...—տես...  
Տես...—տես...  
Ասաւ—բիճէն  
Քրթմնջալէն:



Իշուկն ասաւ—  
Խօսքն արաւ.  
Բիճու զիմաց  
Դիմ-զիք կանգնած,  
Գունչը տնկած,  
Պինչն ու բերան  
Բացած լայն-լայն,  
Չմայլանքով—  
Մէկ-վեր, մէկ-վար,  
Բարձրից-ցածից,  
Էշխով-ուշքով,  
Հեքով-ձեքով,  
Փէլքով-խելքով  
Ու շնորքով  
Երգն ասաւ:  
Նրա երգը՝ խուլ էլ լինի՝  
Ո՛վ չի լսի:

Չորից,  
Խորից  
Կրբարձրանար  
Շարան-շարան  
Մի կարաւ ան:  
Իշու ձէնք երբոր առան—  
Գան—ի՛նչ տեսնեն...  
Գան—ի՛նչ տեսնեն...  
Կանանչներով,  
Ճաճանչներով  
Չքօնու՛մ են  
Ու ստանում են  
Էշն ու բիճէն:  
Երկուսին էլ մի լաւ բարձան,  
Առաջ-արին  
Ու խառնեցին կարաւանին:

Խորունկ ձորից  
Ել դարիվեր,  
Կերթաս, կերթաս  
Ու վերջ չկայ...  
Քար ու բույ,  
Խորտ ու բորտեր...  
Տնքտնքարով ու հեալով  
Էշն իր բեռը քաշքշելիս—  
Անցած-գնացած,  
Է՛ն երջանիկ,  
Է՛ն երջանիկ օրերին էր  
Էրնէկ տալիս:

Ո՛վ իմացաւ,  
 Ո՛վ հասկացաւ—  
 Ի՞նչ պատահեց.  
 Մեր իշուկը գնաց, գնաց,  
 Մէկ էլ տեսար—  
 Դիմ-դիբ կանգնեց...  
 Չի գնում էլ  
 Յետ է մնացել,  
 «Բնութիւնը»  
 Չի մոռացել:

Տէր քաշեց ու քաշքշեց,  
 Տարաւ—բերեց,  
 Խեղճին ծեծեց.  
 «Չո՛ւ, չո՛ւ, չո՛ւ—է՛շ,  
 Կեր՛ թէ դու ես...»  
 Էշը-գէշը,  
 Էդ խենէշը  
 Տոտի՛-տոտի՛—  
 Մէկ էլ էլի  
 Տեսար կանգնեց.  
 Ու ոտները  
 Պինդ-պինդ սղմած,



Գետնին միած,  
 Ժած չի՛ գալիս.  
 Կուզէ ասի.  
 «Չեմ գնայ—չեմ,  
 Ինչ էլ վինի,  
 Ծանր բեռով,  
 Քար ու քով,  
 Էս ձորերով երկան ճամբէն,  
 Չեմ գնայ, չեմ...»

Վերցրեց տէրը  
 Իշու բեռը  
 Բարձաւ ուղտին.—  
 Վիզը ծռեց  
 Ու յետ նայեց  
 Մեր ուղտ բիձէն,  
 Ու փնթփնթաց,  
 Ու մրթմրթաց  
 Քթի տակին...


IV

Ճամբայ կ'երթայ  
 էջն առանց բեռ,  
 Ճամբէն երկան  
 Ու դարիվեր,  
 Գնում ես էնքան  
 Ու չկան վերջ...  
 Հէնց մօտեցան  
 Խօսուն առուին՝  
 Էջրս էլի  
 Ընկաւ կողքին...  
 Առաջ բեռն էր ծանր ու մեծ—  
 Հիմի նրան սվ ինչ արեց...  
 Ոտները սղմել,  
 Գետնին մխել  
 Ու չի գնում:  
 Տէրը գողում  
 Ու հերստատում,  
 Բերնից եկած  
 Խօսքերն ասում,  
 Թքում, մրում,  
 Քաշում, քշում,  
 Զարկոց, խթոց,  
 Էլ «չո՛ւ», էլ «չճ՛շ» —  
 Ո՛ւմ ես ասում,  
 Էլ էս հեղին  
 Բան չի օգնում.  
 Էլ չի գնում  
 Ու չի գնում...

Տէրն ի՞նչ անի,  
 Ո՞րտեղ թողնի  
 Յամառ իշուն.  
 Մի կողմը՝ խոր  
 Անդունդ ու ձոր,  
 Միւս կողմից՝  
 Քարափ ու խիճ.  
 Կարաւանը  
 Էզ նեղ ճամբով  
 Ոլոր-մոլոր  
 Սողում է վեր...  
 Ասողջ իշուն  
 Բան, կորցնի՞,  
 Էզ չի անի.—  
 Իշուն դրին  
 Բիձու բեռին:

Բիձէն լոեց,  
 Լոեց՝ համա  
 Վրէժ պահեց.  
 Վրէժ պահեց  
 Ու չներեց  
 Իր ընկերի իշութիւնը...

Նեղիկ ճամբով  
 Ճօճկրտով  
 Ուզան է գնում,  
 Հանգ առնելով,  
 Կանգ առնելով,  
 Անխօս, անձայն.



V

Մեր իշուկն էլ  
 Բիձու մէջքին՝  
 Միրուն փռել  
 Իր աղանջներ,  
 Ոտն ու ձեռներ,  
 Պոչը երկան—  
 Փունջուխաւոր,  
 Հանգստանում,  
 Ուրախանում,  
 Ու ննջում է,  
 Երագում է...

Երբ վեր ելան  
 Դարիվերը,  
 Ընկան դաշտը,  
 Դուրան տեղը—  
 Քէֆը եկաւ  
 Մեր իշուկի:  
 Ու էն բարձրից—  
 Երբոր տեսաւ  
 Կանանջները,  
 Ծաղիկները  
 Զիլի-պիլի.

Առուները  
 Ոստնում մէջ-մէջ,  
 Ձէն են գցել,  
 Փաթաթուել են  
 Ու խօսում են  
 Իրարու մէջ...  
 Անուշ հովն էր  
 Աւշիկ, սուսիկ  
 Կըշըշնշար,  
 Ու կը խաղար  
 Խոր ձորն ի վեր...—  
 Քէֆը բացուեց,  
 Էշխը եկաւ  
 Մեր իշուկի.  
 Բեռի վրայից,  
 Կորից,  
 Խորից  
 Ձէնը գցեց,  
 Ձէնը գցեց,  
 Չուստ-չուստ,  
 Կուշտ-կուշտ  
 Մի լաւ գուռաց,  
 Սրտանց գուռաց...  
 Էլ չհամբերեց  
 Մեր ուղտ բիձէն.  
 Ու կանգ առաւ  
 Չորի բերնին.  
 Մէկ էլ յանկարծ  
 Էսպէս ասաւ  
 Իշու հանգի.

«Իմ ընկեր-էշ,  
 Ի՞նչ կայ, գիտե՞ս—  
 Ի՞նչ կայ, գիտե՞ս  
 Քէֆս է եկել,  
 Սիրտս բացուել.  
 Իմ բօյով-մէկ  
 Բուսաթով-մէկ  
 Կուզեմ խաղամ  
 Մի տըրընգի...»

—

Էշը հանեց  
 Գլուխը վեր,  
 Եւ ի՞նչ տեսնի,  
 Եւ ի՞նչ տեսնի—  
 Խոր-խոր ձոր,  
 Ոլոր-մոլոր...»

—

Թուքը կպաւ,  
 Երբ իմացաւ,  
 Որ ուղտ բիձէն  
 Պիտի խաղայ  
 Չորի վրայ  
 Մի տըրընգի...  
 Սմբած-ցմբած—  
 Էսպէս ասաւ  
 Ուղտի հանգի.  
 «Ընելօք բիձն,  
 Դէ, դու ասան,  
 Դէ, դու ասան,

8487848

Ո՞վ էր տեսել,  
 Ո՞վ էր լսել—  
 Ո՞ւղտ—տըրընգի...»

Իշու խօսքը բերանումն էր  
 Ուզան սկսեց կարգին պարել.  
 Չորի բերնին  
 Ոտքերն-յետի բարձրացրեց,  
 Վեր-վեր թռաւ,  
 Տրտինկ տալով—


Ու մուշարով,  
 Քրթմնշարով,  
 Էշըս գնաց,  
 Էշըս գնաց  
 Ու գլորուեց,  
 Ու ընկաւ խոր  
 Է՛ն ձորի մէջ,  
 Է՛ն ձորի մէջ  
 Ոլոր-մոլոր...



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
 ՀԱՍՏ-ԱՐՄ ԵՍՐ  
 ԿՄ. Ա. ՄԱՇԿՈՒՄՅԱՆ  
 ԱՍՏՆԱԿԱՆ ԿՆՆԱԿ

ՀՀ Ազգային գրադարան  
 NL00078

209



(Գրիգոր Լալանայ ՅԷ-Գրիգորեանցի յորինանկան գումարով):

ԳԻՆՆԷ 25 ԿՈՂ.